ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Գոռ Քոչարյան, ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության ֆինանսական հաշվետվությունների մշտադիտարկման և աուդիտի կարգավորման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

ք. Բաթումի (Վրաստանի Հանրապետություն), 2023 թվականի հունիսի 5-9-ը

3. Հրավիրող կողմը

Համաշխարհային բանկի Ֆինանսական հաշվետվողականության բարեփոխումների կենտրոն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Համաշխարհային բանկի Ֆինանսական հաշվետվողականության բարեփոխումների կենտրոնի կողմից կազմակերպված՝ Համաշխարհային բանկի, Ավստրիայի և Շվեյցարիայի կառավարությունների կողմից համատեղ մշակված հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ներկայացման (PULSAR) ծրագրի հերթական աշխատաժողովին:

5. Քննարկված թեմաները

- Վրաստանի Հանրապետությունում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների փորձը, առկա մարտահրավերները և հետագա քայլերը.
- Հաշվապահական հաշվառման, բյուջետավորման և հարկաբյուջետային վիճակագրության միջև առկա տարբերությունների հարթեցման ուղիները.
- Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտում գործող տարածաշրջանային միավորումները.

- ՀՀ-ում և Ուկրաինայում իրականացվող հանրային հատվածի հաշվապահական հաշվառման գնահատման պիլոտային ծրագրի ներկա կարգավիճակը.
- Կայուն զարգացման հաշվետվողականության արդի զարգացումները և շահառուները.
- Կայուն զարգացման հաշվետվողականության հայեցակարգային հիմունքները, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունների միջև կապը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են ծրագրի շահառու երկրներում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտի բարեփոխումների ընթացքը, հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտում կատարված վերջին փոփոխությունները և զարգացումները, արդի հիմնախնդիրները: Ներկայացվել են ՀՀ-ում իրականացված բարեփոխումները, հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման համակարգի ներդրման ընթացքում առաջացած խոչընդոտները, դրանց վերացմանն ուղղված քայլերը և առաջիկա անելիքները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Առկա չեն

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Հունիսի 14, 2023թ.